


# ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

## ԱՐՍԵՆ ԱՅՏՈՂՅԱՆ

(Մեղեդյան 140-ամյակի առթիվ)

Ա. Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Արսեն Այտրեյանը ծնվել է 1825 թ. Կ. Պոլսի Բերա արվարձանում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի Մխիթարյան դպրոցում: 1835 թ. նա գնում է Վիեննա և ուսումը շարունակում Վիեննայի Մխիթարյանների յոթուցուց Գեո փոքր հասակից Այտրեյանը մեծ սեր է հանդես բերում լեզուների նկատմամբ. տասնվեց տարեկան պատանին իմացել է լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն, թուրքերեն, արաբերեն, անգլերեն, գերմաներեն: Սրանց հետագայում ավելանում են



պարսկերենը, հունարենը, սանսկրիտը: Այտրեյանը հիանալի գիտեր իր մայրենի լեզուն՝ հայերենը՝ և՛ գրաբարը, և՛ աշխարհաբարը: Նա այնքան վարպետորեն է տիրապետել գրաբարին, որ դեռ քսան տարեկան հասակում հմտորեն գրաբար է թարգմանել մի շարք գործեր:

Արսեն Այտրեյանը մեծ հարգանքի և բարձր գնահատականի է արժանացել իր ժամանակի և հետագա նշանավոր հայ և եվրոպացի ականավոր հայագետների կողմից: Նրա «Քննական բերականության» հրատարակումից ընդամենը մեկ տարի էլ չանցած, գերմանացի հայտնի լեզվաբան-հայագետ Պետերմաներ Ա. Այտրեյանի աշխատության մասին մի ընդարձակ դրվատական

գեկուցում է ներկայացրել Բեռլինի ակադեմիային: Ֆրանսիացի ականավոր լեզվաբան, հայագետ Ա. Մեյեն հայերենի համեմատական քերականությանը նվիրված իր արժեքավոր աշխատությունը («Գասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ») նվիրել է Ա. Այտրնյանի հիշատակին: Հայտնի լեզվաբան և հայագետ Ն. Մաոբ Ա. Այտրնյանի գրական գործունեության հիսնամյակի կապակցությամբ Այտրնյանին հղած իր հեռագրում նրան անվանում է նոր հայերենի քերականության հայր: Ա. Այտրնյանի լեզվաբանական ժառանգությունը ըստ արժանավոր գնահատվել է նաև սովետական լեզվաբանների կողմից<sup>1</sup>: Ա. Այտրնյանը մեծ հարգանք է վայելել իր ժամանակակիցների կողմից: Հայկական կոտորածների ժամանակ նա հնարավորին շահ ձեռք է մեկնել իր դժբախտացած հայրենակիցներին, օգտագործելով նաև ավստրիական կայսեր մոտ ունեցած իր հարգանքն ու ծանաչումը:

Ծավալով մեծ չէ Ա. Այտրնյանի թողած գիտական ժառանգությունը: Իրեն լեզվաբան առաջին հերթին և հիմնականում նա հայտնի է իր «Քննական քերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզվի» (1866) աշխատությամբ: Բայց այդ աշխատությունն էլ բավական է, որպեսզի Այտրնյանն իր պատվավոր տեղն ունենա հայ լեզվաբանության պատմության մեջ:

«Քննական քերականություն»-ից բացի Այտրնյանը գրել է նաև գրարար մի քերականություն: Ա. Մեյեի կողմից այն գնահատվել է որպես գրարարի յաջողուն քերականություն: Այժմ էլ այդ աշխատությունը համարվում է դասական հայերենի լավագույն քերականություններից մեկը:

Նա գրել է նաև այլ գործեր, այդ թվում և մի շարք արժեքավոր լեզվաբանական հոդվածներ:

Ա. Այտրնյանը շուրջ քսան տարի գրադպել է նաև մանկավարժությամբ, որպես ուսուցիչ և որպես վարժարանի վարիչ: աշխատել է Վիննայում, Պոլսում և Զմյուռնիայում: Իր մանկավարժական գործունեության ընթացքում փորձել է կիրառել դաստիարակության և ուսուցման առաջավոր մեթոդներ, որոնց նպատակն է եղել ոչ ուրամատչելի կերպով և խորր գիտելիքներ տալ հայ մանուկներին, օգնել նրանց ձիրքերի ու տաղանդի բացահայտմանն ու դարգացմանը:

Ա. Այտրնյանի անվան հետ է կապվում նաև «Հանդես ամսօրյա» ամսագրի հրատարակությունը, որը հիմնադրվել է նրա կողմից 1887 թ.: Դա հայկական առաջին բանասիրական հանդեսներից մեկն է, որը կարևոր դեր է խաղացել հայագիտության զարգացման գործում:

Ա. Այտրնյանի վաստակի մեջ, սակայն, ինչպես նշվեց, առանձնահատուկ տեղ է զբաղում «Քննական քերականություն»-ը: Սա մի սովորական քերականություն չէ: Հրապարակ գալով գրարարյանների և աշխարհարարյանների սուր պայքարի պայմաններում, «Քննական քերականություն»-ը նշանակալից դեր է խաղացել զրական աշխարհարարի հաղթանակի գործում և դրանով նպաստել մեր նոր զրական հայերենի, առավելապես զրական արևմտահայերենի, զարգացման ճիշտ ուղու ընտրությանը և հետագա մշակմանը: Իր այս աշխատության մեջ Ա. Այտրնյանը տեսականորեն հիմնավորել է աշխարհարարի գոյության պատմական իրավունքը, գիտական համոզիչ փաստարկներով պաշտպանել աշխարհարարի դատը «զրապայքարում»: «Կարելի է ասել, — գրել է ժամանակի մատուր այս կապակցությամբ, — որ ոչ ոք մեր զրական լեզվի դատը պաշտպանելու մեջ այնքան հզոր զենք չէ ունեցել իր ձեռքին, ինչպես Տ. Այտրնյանը իր գիտնական, գեղեցիկ գործով...»<sup>2</sup>: «Միակ երկով մը այնչափ գործ տեսավ այդ մասին, որչափ որ ուրիշ շատեր՝ բազմաթիվ հեղինակություններով չէին կրցած տեսնել իրմե առաջ»<sup>3</sup>:

«Քննական քերականություն»-ը գործնական մեծ դեր է խաղացել նաև իրեն հենց քերականություն: Այտրնյանի աշխատությունից առաջ էլ գրվել են աշխարհարարի առանձին քերականություններ. աշխարհարարի քերականության նկարագրություն, փորձեր են արվել Սքոթլենդի, Միսիսիպի Սերաստացու, Ն. Թոսինյանի կողմից: Բայց այդ քերականություններից ոչ մեկը չի կարող համեմատվել Այտրնյանի աշխատության հետ: «Քննական քերականություն»-ը դրանցից շատ բարձր է իր գիտական մակարդակով, իր արժեքով: Ի դեպ, նման մի աշխատություն ծրարել էր պրել նաև Մ. Նալբանդյանը, սակայն նրան այդպես էլ չհաջողվեց իրականացնել իր

<sup>1</sup> Արրահամյան Ա. Ա., Արոն Այտրնյանի «Քննական քերականություն» աշխատության «նախաշավիղը» (ՀՊՄԻ-ի գիտական աշխատությունների ժողովածու, 1945, № 2), է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, Երևան, 1958, հատ. 1, էջ 269—288: Ջահուկյան Դ. Բ., Հայ լեզվաբանական միտքը և աշխարհարարի հարցերը XVIII—XIX դարերում (դոկտորական դիսերտացիա), Երևան, 1954: Ջահուկյան Գ. Բ., Լեզվաբանության պատմություն, Երևան, 1960, հատ. 1, էջ 433—436:

<sup>2</sup> «Մշակ», 1902, № 148:

<sup>3</sup> «Արևելք», 1902, № 4994:

մտադրությունը: «Քննական քերականություն»-ը աշխարհարարի առաջին ամբողջական, դիտական քերականությունն է, որտեղ Ա. Այտրնյանը իրեն դրսևորել է որպես հմուտ հետազոտող գիտնական: Երբ գրվեց այս աշխատությունը, աշխարհարարը դեռևս լրիվ չէր ձևավորված, նորմավորված չէր աշխարհարարի քերականությունը, այն իր հստակ կերպարանքը չուներ, դեռևս հղկված, մշակված մի կայուն համակարգ չէր ներկայացնում իրենից, չկար միասնականություն, հատկապես գրական լեզվի մեջ, առկա էին բազմաթիվ գուգահեռ ձևեր, անկանոնություններ: Ա. Այտրնյանը լեզվական երևույթների քննության, օրինաչափությունների սահմանման մեջ հանդես է բերել գիտնական հետազոտողին հատուկ հմտություն, նա կարողացել է բազմաթիվ գուգահեռությունների, անկանոնությունների մեջ ճիշտ կողմնորոշվել, ընտրել կանոնավորը, օրինաչափը, «հեռանկարայինը»: Դրա ապացույցն է այն, որ այդ քերականությունը այնպես հաջողությամբ բռնեց իր քննությունը պատմության մեջ, նրանից օգտվեցին հետագա շատ քերականագետներ, նրա հիման վրա գրվեցին բազմաթիվ աշխատություններ<sup>4</sup>: Նորմավորելով աշխարհարարի քերականությունը, Այտրնյանի աշխատությունը նպաստել է աշխարհարարի հետագա կանոնավորմանը, մշակմանն ու կատարելագործմանը: Պատահական չէ, որ այնքան բարձր է եղել ժամանակակիցների, ժամանակի մամուլի տված գնահատականը Ա. Այտրնյանին և նրա աշխատությանը. «Քննական քերականություն»-ը մինչև այժմ էլ չունի իր նմանը — դրել է «Մշակ»-ը 1902 թ., «Քննական քերականության» հրատարակությունից ավելի քան երեսունհինգ տարի հետո, — հ. Այտրնյանն աշխարհարարի հարցերում մի հեղինակություն է. որին դիմում են ամենքը: «Արևելքն» իր հերթին «Քննական քերականություն»-ը գնահատել է իրրև մի գիրք, որն «անվիճելիորեն բարձր է, և որուն թույլ, նույնիսկ իրմե շատ ավելի վերջերը եկող բազմաթիվ քերականներ մինչև անգամ շուք մը չեն կրցած երկարել: Եվ արդեն, աշխարհարարի այդ հսկա ու տարածուն ուսումնասիրությունը չէ՛, որ այսչափ ատեն ամենեն գլխավոր աղբյուրը եղած է բոլոր քերականությամբ զբաղողներուն, անսպառ գրամագուրիս մը, որ ինչ կերպով ալ, ինչ համեմատությամբ ալ շահագործվի, միշտ պիտի մնա այգպես, պարարտ ու նյութալից... Առանց Այտրնյանի այդ գործին, շատ մը աշխարհարարի քերականություններ թերևս բնավ գոյություն չպիտի ունենային այսօր: Այժմ էլ աշխարհարարի պատմության հարցերով զբաղվող լեզվաբանը չի կարող չըջանցել Ա. Այտրնյանի «Քննական քերականություն»-ը:

«Քննական քերականություն»-ը սովորական քերականություն չէ նաև այն իմաստով, որ նրանում արձարծված են հայագիտությանն ու բնագիտությանը լեզվաբանություններ վերաբերող մի շարք կարևոր տեսական հարցեր: Ա. Այտրնյանի «Քննական քերականության» մեջ մեծ արժեք է թերևս ավելի մեծ, քան աշխատության հիմնական մասը) ունի «Նախաշափիղ»-ը XIX դարի հեղինակների մոտ բնագիտությանն և կատելի է «ներածություններին» (որոնք կարող են կոչվել երբեմն նաև «Նախաշափիղ», «առաջարան») առանձնահատուկ դեր հատկացնելը. այստեղ հեղինակները շարադրում են իրենց տեսությունը, իրենց հիմնական գրույթները, իրենց աշխարհըմբռնումը, տալիս են իրերի, երևույթների իրենց գնահատականը, գործունեության ծրագրային գրույթները, այն ամենը, ինչ վերաբերում է տեսությանը, տեսական մասին:

«Նախաշափիղ»-ը հայերենի պատմական քերականության առաջին լուրջ փորձն է և լեզվաբանական տեսակետից մեծարժեք գործ: «Նախաշափիղ»-ում արտահայտած իր հայացքներով, իր արած տեսական արժեքավոր բնագիտական գրույթներով Այտրնյանը հաղթահարել է ժամանակի լեզվաբանությունը բնորոշ մի շարք սահմանափակ կողմեր և որոշ հարցերում վեր բարձրացել բնագիտության ժամանակի լեզվաբանական գիտության մակարդակից: Ի տարբերություն Շլայխերի և մյուսների տարածված կարծիքի, Ա. Այտրնյանը դեռ երիտքերականներից առաջ, մերժելով լեզվի զարգացման բնույթի հակապատմական մեկնարանությունը, լեզվի գոյության մեջ երկու շրջաններ՝ ծագման և անկման շրջաններ առանձնացնելու տեսությունը, առաջ է քաշում լեզվի անընդհատ էվոլյուցիոն զարգացման տեսակետը: Ա. Այտրնյանը դեռ անցյալ դարի 60-ական թթ. սոցիոլոգիական դպրոցի հանգես գալուց առաջ նկատել է լեզվի հասարա-

<sup>4</sup> Մասնավորապես արևելահայ աշխարհարարի առաջին քերականագետներից մեկին՝ Ս. Պալասանյանին իր հայտնի աշխատությունը դրելիս. հենց իր՝ հեղինակի խոստովանությամբ, օգտակար նյութ է մատակարարել նաև Ա. Այտրնյանի «պատմական աշխատությունը»՝ «Քննական քերականություն»-ը: «Մենք մեր կողմից խոստովանում ենք, — գրել է Պալասանյանը. — որ թիչ օգուտ չբաղեցինք հ. Արսեն Այտրնյանի քերականությունից. որ շատ հետաքրքրական տեղեկություններ է պարունակում բնագիտության հին և նոր հայերենների վրա» (Ս. Պալասանյան, Հնդհանուր տեսություն արևելյան նոր գրավոր լեզվի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 5):

կական բնույթը, լեզվի՝ որպես հաղորդակցման միջոց ծառայելու հանգամանքը Ա. Այտրնյանը բնագունում է նաև լեզվի և մտածողության կապը և մեծ գեր հատկացնում դրան:

Լեզվի՝ որպես հաղորդակցման միջոց ծառայելու հանգամանքի դիտակցումն է, որ Ա. Այտրնյանին գրողում է հանդես գալու աշխարհարարի պաշտպանությամբ, աշխարհարարին, որպես գրական լեզվի, ազատ ասպարեզ տալու պահանջով, թեև ինքը սիրում էր գրարարը: Նա պարզ տեսնում էր, որ հաղորդակցման միջոցի դերը աշխարհարարն է կատարում, որ ժողովուրդը խոսում է աշխարհարար լեզվով, իսկ գրարար հասկանում և մանավանդ գրարարով գրում են միայն հատուկներ մարդիկ: Երարարը, որպես գրական լեզու, իր ժամանակի համար եղել է շատ գեղեցիկ, հարուստ ու ճոխ լեզու, բայց ժամանակի ընթացքում, պատմական պայմանների բերմամբ կտրվելով իր բնական հիմքից՝ ժողովրդական կենդանի խոսակցական լեզվից, աստիճանաբար կորցրել է հաղորդակցման ֆունկցիան և ինքն իրեն դատապարտել մահվան: Այտրնյանը ցույց է տալիս, որ աշխարհարարը գրարարի ազավաղում չէ, ինչպես կարծում են ոմանք, այլ նույն ժողովրդական կենդանի խոսակցական լեզվի հետագա զարգացումը, որի հիման վրա ժամանակին ստեղծվել էր գրարարը (որպես գրական լեզու), այսինքն՝ նույնքան հայերեն էր, նույնքան հարազատ, հայկական, որքան և գրարարը: Այժմ հարկավոր էր միայն ավելի զննականորեն աշխարհարարը գրական լեզվի ասպարեզ մտցնելով մշակել, հղկել այն և այդ ժամանակ նա կդառնար նույնքան գեղեցիկ, ճոխ և հարուստ, որքան եղել էր իր ժամանակին գրարարը:

Այս հարցի կապակցությամբ Ա. Այտրնյանը բնագծում է նաև լեզվի և մտածողության սերտ կապի հանգամանքը, ցույց է տալիս, որ լեզուն նաև մտքերի արտահայտման միջոց է, իր վիճակով արտացոլում է մտածողության, գիտակցության բնույթը, զարգացումը, որ մտածողության վարզացման, մարդու գիտելիքների, իմացական կարողությունների ընդլայնման հետ փոփոխվում ու զարգանում է նաև լեզուն: Նոր լեզուն ունի իր նոր տրամաբանությունը, նոր աշխարհընկալումը: Յուրաքանչյուրը լավ է իր ժամանակի համար: Գրարարը համապատասխանել է ներքին մտածողությանը, հին ժամանակներին, նոր ժամանակներին, նոր մտածողությանը նա չի կարող ծառայել: Նրանով հաջողությամբ կարելի է թարգմանել իր ժամանակի հույն և լատին գասական հեղինակների աշխատությունները, բայց եթե ցանկանանք նոր ժամանակների որևէ գործ թարգմանել գրարար, ստիպված պետք է փոփոխենք, նորացնենք գրարարը և դա, այսպես թե այնպես, արդեն այն գրարարը չի լինի Ահա սա է Ա. Այտրնյանի համոզմունքը: «Հիններուն խորհելուն կերպը՝ նորերուն կերպեն շատ տարբեր է... Եթե մենք զմեզ հին ժամանակներու չենք կրնար փոխադրել, ինչպե՞ս կուզենք որ հին ժամանակներուն խոսվածքը մեր ժամանակները բերենք... Հին լեզվի մը ուժն ու գեղեցկությունը վաստակելու և արդյամբ ցուցնելու համար անոր գործածողը պետք է որ ինքն զինքն ուրանա, նոր զազափարը, անձնական ճաշակը և այլն և շատ ճշդիվ ու շատ ակնածություններով հին հեղինակներու զազափարողն ըլլա՞ առանց յուր անձին կամ ժամանակին վրա հեղինակություն մը ճանչնալու: Միով բանիվ՝ ինչ զինքը հին աշխարհը փոխադրե, այնպես որ կարենա թե հին, թե նոր աշխարհը միանգամայն բարել... Կրնա մեկը ճակետոս Եր գրարար թարգմանել ապահովությամբ: Բայց զուցե ոչ Շաթուպրիան մը՝ առանց հին լեզուն նորացնելու կամ ազավաղելու»<sup>5</sup>:

Ա. Այտրնյանը լեզվի կյանքը իրավացիորեն դիտում է որպես պատմական անընդհատ պրոցես, անընդհատ փոփոխություն, անընդհատ զարգացում, ի հակադրություն իր ժամանակի տարածված այն կարծիքի, որը լեզվական փոփոխությունները համարում էր լեզվի քայքայում, լեզվի անկում: Յուրաքանչյուր լեզու ունի իր կյանքի պատմությունը, որը ներկայացնում է անընդհատ աստիճանական անզգալի փոփոխությունների անվերջանալի մի շարք: Այդ փոփոխությունների բազմությունը, խմբերը ձևավորում են լեզվի զարգացման տարբեր շրջաններ, միմյանցից տարբերվող լեզվական տարբեր վիճակներ: Սակայն լեզվական զարգացման տարբեր շրջանների սահմանը, նրանց «անջատման կետը», ինչպես Այտրնյանն է նկատել դեռ երիտերբականներից առաջ, — անկարելի է ճշտել: Այդ փոփոխությունները, այդ բնության անցումները՝ գիճակ վիճակ անզգալի փոփոխություն մըն են, որոնց բոլորը մեկանց միևնույն լեզվին գունոցը մեղմ ծիածանը կկազմեն»<sup>6</sup>: Առանձին փոփոխությունները դեռևս չեն նշանակում հնի վերացում և նոր որակի առաջացում: Նորը ձևավորվում է աստիճանաբար, հնի մեջ, հինը դանդաղորեն զիջում է իր դիրքերը, ետ քաշվում, իսկ նորը, սկզբում երերալով, բայց ժամանակի հետ ավելի ու ավելի հաստատուն կերպով «կանգնում է իր սեփական ոտքերի վրա» և հնի թուլանալուն

<sup>5</sup> Ա. Այտրնյան, Քննական քերականություն..., Վիեննա, 1866, էջ 187, 293:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 31:

համեմատ ինքն ավելի գորանում ու ամարդամեջ է դուրս դալիս: Սակայն նորի հանդես դալով փոփոխությունը չի դադարում, նորն էլ ծնվելով շարունակում է փոփոխվել: այն իր ծննդից արդեն դատապարտված է հնանալու, հին դառնալու: «Լեզուներն ալ... իրենց փոփոխություններն և ըստ այնմ իրենց պատմությունն ունեն... Լեզվի մը ծագումը այն անզգալի անդադար փոփոխությանց շարունակության մեջն է. և ծնած կհամարվի, երբ որ յուր նախնիքացն զատված հատուկ կերպարանք առած է... Եվ այն ծնունդը՝ իբրև նախնիքաց փոփոխությանց արդյունք՝ դարձյալ մեղմով և անզգալարար կրնկղմի, կկորսվի անոր կենացը հետագա փոփոխությանցը մեջ, որոնք լեզվին զլիսավոր պատմական մասը կկացուցանեն»: Իսկ ի՞նչն է այս փոփոխությունների պատճառը, ազդակը: «Այս փոփոխությանց առաջին և զլիսավոր մղումը՝ ղոնդն է մարդուս մտացն առած զարգացումը կամ նորանոր զաղափարաց պեսպիսությունը, զորոք յուր նմանվոցն հաղորդելու կամ ավելի դյուրավ հաղորդելու համար՝ լեզվի նորանոր կերպեր և եղանակավորմունք կստեղծել: Եվ այսպես՝ քանի որ լեզուն մտաց երևեցուցիչն է, հարկ է, որ որչափ զաղափարներ որ միտքը ստանա, այնչափ նոր տարրերով ալ լեզուն ճոխանա, որչափ զաղափարներ որ միտքը հոգե, նույնչափ հեղվածո բառեր (բարդություններ) օրրստօրե կրկանելուն... Ուրեմն խորհող ու խոսող մարդկությունն է յուր լեզվին ձևն ու կերպը տվողը» (ընդգծումը մերն է—Ա. Վ.): Այսինքն՝ փոփոխություններ առաջացնող առաջին և զլիսավոր պատճառներն են՝ մարդկանց մտածողության զարգացումը, նոր գիտելիքների ձևափոխումը, լեզվի՝ որպես հաղորդակցման, մտքերն արտահայտելու միջոց ծառայելու հանդամանքը: Նոր զաղափարները, նոր պատկերացումները, մտքերն ավելի հասկանալի կերպով հաղորդելու ձգտումը պահանջում է արտահայտության նոր միջոցների, նոր բառերի ստեղծում: Եթե այդ պահանջը ժամանակին չի բավարարվում, ապա դրանով աղքատացվում է լեզուն: Եվ Ա. Այտրեյանն էլ լեզվի կատարյալ կամ ոչ կատարյալ լինելը հենց կապում է միայն զրական լեզվի ու նրա մշակվածության հետ, իսկ լեզվի այդ մշակվածությունը, լեզվի զարգացումը իր հերթին կապում հասարակական պայմանների, դրանց նպաստավոր կամ աննպաստ լինելու հետ:

Ա. Այտրեյանը ընդունել է նաև լեզվի և ժողովրդի պատմության կապի գոյությունը: Լեզուն իր վիճակով, ժամանակի ընթացքում ընդունած իր փոխակերպումներով արտացոլում է ժողովրդի պատմությունը և այդ առումով լեզուն ունի պատմական նշանակություն: «Լեզուն յուր հառաջադիմության, անկման ու վերանորոգության վիճակներովը անվրեպ ծանրաչափ կըլլա՝ մարդկության փոփոխմանցը մեջ աղբի մը նյութական, բարոյական և զլիսավորարար մտավորական կենցաղը հաջող կամ անհաջող վիճակին: Եվ սա է լեզվի մը պատմական նշանակությունը»<sup>9</sup>:

Լեզուն հասարակական երևույթ համարելով, Այտրեյանը նշում է նաև, որ նույն հանրության տարրեր խավերի, անհատների առանձին խմբերի լեզվի մեջ կան տարբերություններ, որոնք հասարակական պայմանավորվածություն ունեն, հասարակական պայմանների, մարդկանց վիճակի ու զբաղմունքի արդյունք են: Այդ տարբերությունները, սակայն, տարբերություններ են ընդհանուրի մեջ, միասնականության մեջ, չեն խախտում լեզվի միասնությունն ու ընդհանրությունը: Հաղորդակցությունը, մարդկանց շփումը, լեզվի հաղորդակցական գերը ապահովում է այդ միասնությունը: «Սակայն և այսպես այլևայլ բազմազանյան աստիճանավորություններն իրարու հետ հանապազօրյա շփման մեջ մնալով, որչափ որ դուրսը պեսպիսությունը շանհետանա, բնականապես իրարմե առնել տալու և բաղադրելու անպակաս առիթներովը դարձյալ բարոյապես կնույնանան կամ վերջապես նույն կմնան: Այս նույնությունը, այս անբաժին միությունը, հանդերձ հետզհետե կրելու այլալուծություններովը, կարելի է որ տևական ըլլա՝ քանի որ ժողովուրդն անբաժին՝ դյուր առ դյուր, երգ առ երգ իրարու քով նստած մեկը զմեկ կլսեն»:

Ուշադրության է արժանի այն, որ Այտրեյանը լեզվի միասնությունը բացատրում է նրա հաղորդակցական ֆունկցիայով և ոչ թե «մարդկային բնության ընդհանրությամբ», ինչպես անում էին իր ժամանակի և հետագա ճանաչված որոշ լեզվաբաններ (Հումբոլդտ, Ֆուլբեր և ուրիշներ):

Իսկ այն, ինչ համարվում է «մարդկային բնության ընդհանրություն», իր արտահայտությունն է ստանում մարդկային տարրեր լեզուների ընդհանրությունների մեջ, լեզուների միանգամայն անկախ զարգացմամբ ձևաբերվող ընդհանրությունների մեջ: «Լեզվաց ընդհանրական

7 նույն տեղում, էջ 31, 32:

8 նույն տեղում, էջ 32, 33:

9 նույն տեղում, 1866, էջ 26:

10 նույն տեղում, 1866, էջ 34:

շարժմանը մեջ զանազան մարդկային ցեղերը, նաև իրարմե ուռուտման օտար, իրարու ամենևին անհազորդ ազգերն ալ՝ իրրե թե հափասարական դաշնակցությամբ մը միարանած են միևնույն ժամանակին մեջ միևնույն գույզ ընթացքն ընթանալու<sup>11</sup>։ «Եթե խնդրոցս մեջ հարկ է իմաստասիրել, հարկ է որ համեմատությամբ հառաչանանք, և շթոզունք մեկը զմեզ այն ընդհանուր ազգաց սահմանեն դուրս, որմե հայ ազգը չէր կրնար ինքր գինքր հանել, և ոչ՝ լեղունիս այն հոգեբանական օրենքներեն ազատ կացուցանենք, որոնցմե մարդկային բարբառ մը կամ մանավանդ ընդհանուր մարդկային միտքը չի կրնար բացառություն ընել»<sup>12</sup>։

Ահա այդ ընդհանրությունները, այդ ընդհանրությունների բացահայտումն է, որ շատ ավելի ու՝ զարձեյ են լեզվաբանական առանձին դպրոցների ուշադրության առարկան, գործունեության նպատակը։ Ինքը՝ Ա. Այտրեյանը չի խորացել այս հարցերի մեջ, մանրագնին հեաազոտությունների, ուսումնասիրությունների մեջ չի մտել և նրա կոահումները մեացել են հենց որպես կոահումներ։ Սակայն այն, ինչ արել է Ա. Այտրեյանը, այդ էլ բավական է նրան խոշոր լեզվաբան, իսկ նրա հիմնական աշխատությունը՝ «Բնական քերականություն»-ը մեծարժեք գործ հռչակելու համար։ Եվ այժմ, ավելի քան վաթսուն տարվա հեռավորությունից (Ա. Այտրեյանը մահացել է 1902 թ.), Ա. Այտրեյանը շարունակում է նրեայ իրրե ականավոր լեզվաբան-հայագետ։ Թեև Այտրեյանը համաշխարհային հռչակ ստացած, իր առանձին լեզվաբանական ուղղությունն ստեղծած լեզվաբանների թվին չի պատկանում, բայց «Նախաշավիղ»-ում արտահայտած իր հայացքներով առաջ է անցել ժամանակի լեզվաբանության մակարդակից։ Իր ժամանակին նա ճիշտ է հասկացել հայոց լեզվի զարդացման ուղղությունն ու խնդիրները և իր գործունեությամբ, իր աշխատություններով մեծապես նպաստել հայերենի զարդացման կորևուր հարցերի լուծմանը։

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 61։

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 30։